ՈՐՈՇՈՒՄ

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

քաղ. Երևան 15 սեպտեմբերի 2009թ.

Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի 2-րդ դատական կազմը

Նախագահությամբ՝ Հ. Դանիելյանի

Անդամակցությամբ՝ Ֆ. Թոխյանի

Մ. Թոփուզյանի

Քննության առնելով Իրինա Օգանեզովայի, Աննա և Ագնեսա Բաղդասարյանների դիմումի ընդունելիության հարցը

ՊԱՐԶԵՑ

Իրինա Օգանեզովան, Աննա և Ագնեսա Բաղդասարյանները դիմել են Սահմանադրական դատարան, վիճարկելով ՀՀ Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204₂₈ հոդվածի 1-ին ենթակետի սահմանադրականությունը:

2-րդ դատական կազմը գտավ, որ ներկայացված դիմումը համապատասխանում է ՀՀ Սահմանադրության 101 հոդվածի 1-ին մասի 6 կետի, Սահմանադրական դատարանի մասին օրենքի 27, 28 հոդվածների եւ 69 հոդվածի 1, 2, 4, 5 կետերի, ինչպես նաեւ ՀՀ Սահմանադրական դատարանի Կանոնակարգի պահանջներին: Պահպանվել է Սահմանադրական դատարան դիմելու՝ օրենքով նախատեսված ժամկետը: Ագնեսա Բաղդասարյանի կողմից մուծվել է պետական տուրքը, իսկ Իրինա Օգանեզովան և Աննա Բաղդասարյանը միջնորդել են իրենց ազատել պետտուրքի վճարումից, որը բավարարման ենթակա է, քանի որ չեն աշխատում և եկամտի այլ աղբյուր չունեն:

Դիմողները սպառել են դատական պաշտպանության բոլոր միջոցները և գտնում են, որ իրենց նկատմամբ կիրառված օրենքի դրույթը հակասում է Սահմանադրությանը:

Ղեկավարվելով Սահմանադրական դատարանի մասին օրենքի 69 հոդվածի 6 կետով, Սահմանադրական դատարանի 2-րդ կազմը

ՈՐՈՇԵՑ

1.Իրինա Օգանեզովայի, Աննա և Ագնեսա Բաղդասարյանների դիմումը՝ ՀՀ Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204₂₈ հոդվածի 1-ին ենթակետի սահմանադրականությունը վիճարկելու մասին, ընդունել քննության, կազմել գործ, որով պատասխանող ճանաչել ՀՀ Ազգային Ժողովին:

2. Իրինա Օգանեզովային և Աննա Բաղդասարյանին ազատել պետտուրքի վճարումից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ՀԱՐՑՈՒՆԴԵՐ ՐՈՒՔՑՈՒՆ